Կոնֆերանսի աշխատանքներն ամփոփող իր եզրափակիչ ելույթում աղգագրության բաժնի վարիչ Դ. Վարդումյանը նշեց, որ 6 նիստում լսված ավելի քան 30 զեկուցումներում և դրանց քննարկման ընթացքում արծարծվեցին ինչպես հայ ժողովրդական մշակույթի տարբեր դրսևորումներին, այնպես էլ այլընթիկ մշակութային փոխառնչություններին նվիրված տարաբնույթ ու բազմաբովանդակ հարցեր։ Նա հավաստիացրեց, որ կարդացված զեկուցումներից շատերը կատարյալ ու հասուն գիտական հետազոտություններ են, ուստի և արժանի՝ առանձին հոդվածների տեսքով լույս ընծայվելու։ Իրրև կոնֆերանսի բնորոշ առանձնահատկություն մատնանշվեց անկաշկանդ ու բանիմաց գիտական վեճ վարելու երիտասարդ մասնագետների կարողությունը։

ՋԱՎԵՆ ԽԱՌԱՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70 ԱՄՅԱԿԻՆ

Ս/թ ապրիլի 29—30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի XXIII գիտական նստաշրջանը՝ նվիրված անվանի հայագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀՍՍՀ պետական և Մաշտոցի անվան մրցանակների դափնեկիր, գիտության վաստակավոր գործիչ Լևոն Ստեփանի Խաչիկյանի ծննդյան 70 ամյակին։

Նստաշրջանը բացեց Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Արևշատյանը։ Նա նշեց, որ Լ. Խաչիկյանը պատկանում է սովետահայ պատմաբանների և բանասերների այն սերնդին, որը մեծ նվիրումով և նպատակասլաց գիտական գործունեությամբ լայնացրեց հայագիտության ավանդական շրջանակները, նոր սկզբնաղբյուրներով հարստացրեց հայ ժողովրդի բազմադարյան կյանքի պատկերը և մեծապես նպաստեց նրա պատմության համակողմանի և համակարգված լուսաբանմանը։ Խաչիկյան-գիտնականի վաստակը հայագիտության ասպարեզում այն խոշոր ներդրումն է, նկատեց Ս. Արևշատյանը, որ նա կատարեց որպես պատմաբան-միջնադարագետ և աղբյուրագետ, բացահայտելով հին ձեռագրերում պարփակված մի ամբողջ շարք անհայտ բնագրեր և բազմաթիվ նոր տեղեկություններ՝ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակույթի կյանքի վերաբերյալ։ Մյուս խոշոր վաստակը նրա գիտակազմակերպական գործունեությունն է՝ կապված Մատենադարանի, որպես հայագիտության եզակի օջախի կազմավորման և հետագա գործունեության հետ։ 1954—1982 թթ. լինելով Մատենադարանի տնօրեն, Լ. Խաչիկյանն իր շուրջ համախմբեց մի կուռ կոլեկտիվ, որն իր աշխատանքով Մատենադարանին արժանի ճանաչում բերեց ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Այնուհետև Ս. Արևշատյանն անդրադարձավ Լ. Խաչիկյանի գիտական և հասարակական գործունեությանը և ցույց տվեց, որ նրա կյանքն ու գործն անխզելիորեն կապված են Մաշտոցյան Մատենադարանի պատմության հետ։ Նրա անունը, վերջում շեշտեց Ս. Արևշատյանը, ընդմիշտ կմնա հայագիտության նրախտավորների շարքում։

Այնուհետև «Հայոց կյանքի պատկերը «Առ անձն իւր» բանաստեղծության մեջ» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Նազարյանը։ Նա հայտնեց, որ խնդրո առարկա բանաստեղծության ձեռագիր մի օրինակի վրա ժամանակին իր ուշադրությունը հրավիրել է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, որի մտահոգություններից մեկն էր իր աշխատակիցներին և առհասարակ Մատենադարանին առնչվող մասնագետներին օգնելը։ Անդրադառնալով «Առ անձն իւր» բանաստեղծության հեղինակի ինքնության, ստեղծման ժամանակի, արծարծած խնդիրների, հայոց գրավոր բանաստեղծության պատմության մեջ ունեցած տեղի հետ կապված հարցերին, Ն. Նազարյանը ցույց տվեց, որ նրա հեղինակն է XVIII դ. կրթական, լուսավորական շարժման նշանավոր գործիչ, աստվածաբան, փիլիսոփա, նարեկագետ Հակոբ Նալյանը (1706—1764) և որ բանաստեղծությունն արտացոլում է ժամանակի հայոց կյանքն իր ցավալի կողմերով։ «Առ անձն իւր» բանաստեղծությունը, եզրակացրեց զեկուցողը, հասարակությանն ապաքինելու, բարեփոխելու խիզախ քննադատանք է, չափաբերված ճշմարիտ մի ուղեցույց և մարդու ինքնահաստատման, կատարելության խորհուրդ ունի։

Լևոն Խաչիկյանի «Եղիշեի արարածոց մեկնությունը անտիպ աշխատությունը» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Տեր-Պետրոսյանը նշեց, որ Լ. Խաչիկյանի արխիվում պահվում են մի շարք պատրաստի հետազոտություններ, որոնք ժամանակին ինչ-ինչ պատճառներով չեն հրապարակվել։ Դրանցից մեկն է նշված աշխատությունը, որը Լ. Խաչիկյանն իրրև թեկնածուական դիսերտացիա պաշտպանել է 1945 թ.։ Նրանում հեղինակը բազմազան

ձեռագրական աղբյուրների հիման վրա վերականգնել է Եղիշեի կորած ստեղծագործությունը, պարզել նրա աղբյուրների աղերսների հարցերը և հայագիտության համար կարևորություն ներկայացնող մի շարք այլ խնդիրներ։ Լ. Խաչիկյանի ուսումնասիրությունն այսօր էլ չի կորցրել իր թարմությունն ու այժմեականությունը, ուստի նրա հրատարակման կարևորությունն անժխտելի է։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Սահակյանը «Լ. Խաչիկյանը ժողովրդագիտական աղբյուրների հետազոտող» զեկուցման մեջ երևան բերեց Լ. Խաչիկյանի միջնադարագիտական լայն ծրագիրը, որի իրագործման բաղկացուցիչ մասերից մեկն էլ եղել է միջնադարյան ժողովրդական ստեղծագործությունների, հավատալիքների և ազգագրական այլևայլ իրողությունների քննությունը։ Այնուհետև զեկուցողը կոնկրետ օրինակներից ելնելով վեր հանեց ականավոր հայագետի գիտական հայեցության մի շարք առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս նրան բնորոշելու իբրև հայագիտության մեջ մի նոր ուղղության՝ միջնադարագիտության հիմնադրի (մեզնիստիկայի ժամանակակից եվրոպական ըմբռնումով)։

«Նիկողայոս Միստիկոսի նամակի հասցեատերը» զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Մ. Դարբինյանը համադիր քննությամբ ցույց տվեց, որ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 139-րդ նամակն ուղղված է ոչ թե Սմբատ I հայոց թագավորին, այլ նրա որդի Աշոտ II Երկաթին։

Բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Քյոսեյանն իր «Մատենագիտական տեղեկություններ հայ միջնադարյան կերպարվեստի մասին» թեմայով զեկուցման մեջ պատմական զրույցներում և ճառագրական երկերում առկա տվյալների օգնությամբ վերլուծեց հայ միջնադարյան կերպարվեստում հայտնի մի շարք հորինվածքների տեսական բովանդակությունը։ Նա մասնավորապես բացահայտեց հայ մանրանկարչության մեջ ընդունված թեմաների (Խաղակի զոհաբերությունը, Ծնունդ, Մկրտություն, Պայծառակերպություն, Ավերումն դժոխոց) գաղափարական ակունքները։

«Նոր տվյալներ Գևորգ Կաղ մատենագրի մասին (XII դ.)» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Է. Հարությունյանը ցույց տվեց, որ Ներսես Շնորհալուց Ս. Սարգսի վարքը խնդրող Հաղբատի վանքի առաջնորդ Գևորգը, նրա հետ նամակագրական կապ ունեցած Հաղբատի վարդապետ Գևորգը, հանելուկագիր Գևորգ Մեծը, Շնորհալու հետ հանելուկային մրցավեճ վարող Կաղ Ալևորը նույն Գևորգ Մեծ գիտնականն է՝ Կաղ մականվամբ։

Բժշկագիտության թեկնածու Դ. Կարապետյանն իր զեկուցման մեջ մատենագիտական նոր փաստերով ցույց տվեց, որ XVI—XVII դդ. Հայաստանում բնագիտական միտքը վերելք է ապրել։ Նա անդրադարձավ նաև այն հետաքրքրությանը, որ հայ բնագիտական մտքի պատմության ուսումնասիրության նկատմամբ դրսևորել է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը։

Ամաղուի-Նորավանքի նորահայտ տապանաքարերից մեկի վրա վկայված պարոն Սարգսի ինքնության ճշտմանը նվիրված իր զեկուցմամբ բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Մարտիրոսյանը պարզեց, որ նա Աղթամարյանների տոհմից է, աթաբեկ Իվանե Զաքարյանի վասալներից Աղթամար Արփայեցու թոռը։ Իր ժամանակի ռազմաքաղաքական կյանքում պարոն Սարգիսը զգալի դեր է խաղացել Արղուն ու Ահմագ խաների միջև մղված գահակալական պայքարում, Տարսայիճ Օրբելյանի հետ միասին հանդես է եկել քրիստոնյաներին հովանավորող Արղունի կողմում։

Բանասիրական գիտությունների դոկտոր Փ. Անթապյանի զեկուցումը նվիրված էր հայերեն ձեռագրի կոդիկոլոգիական ուսումնասիրման խնդիրներին։ Նա նկատեց, որ կոդիկոլոգիական քննության ոլորտի մեջ են մտնում ձեռագրի նյութական կառուցվածքի բոլոր բաղադրիչները՝ ձևը, գրչության նյութը, կազմը, աստառը, գրչությունը, գծագրողները, կետադրությունը, թանաքն ու ներկերը, մանրանկարները, լուսանցագրերը, կնիքները, հիշատակարանները, ինչպես նաև գրիչների, ստացողների, կազմողների և ձեռագրին առնչվող այլ անհատների գործունեության պայմաններն ու հարաբերությունները։ Ըստ այսմ, հարկ է լինում ուսումնասիրել ձեռագրի արարման ողջ գործընթացը։ Սակայն, ինչպես նկատեց զեկուցողը, գիտական, պատմաճանաչողական և գիտամշակութային մեծ նշանակություն ունեցող այդ հարցին մեզանում, դժբախտաբար, պատշաճ ուշադրություն չի դարձվում։

«Գռուզ» անվան ստուգաբանման նպատակ էր հետապնդում բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Աբգարյանը։ Նա գտավ, որ «Գռուզ» տեղանունը ոչ մի կապ չունի հայերեն «գռուզ» («գանգրահեր») բառի հետ և փոխ է առնված ֆրանկների գործածած «Gruz» բառից։ Այն նշանակում է խաչ և հայ ունիթորների կյանքում փոխարինում է «Սուրբ խաչ» կամ «Սուրբ նշան» հասկացություններին։

Բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Խաչատրյանը հանդես եկավ «Մի նկատառում Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանում» զեկուցմամբ։ Մատենագրական նյութի հետաքրքիր մեկնաբանմամբ զեկուցողն իբրև վարկած առաջ քաշեց հետևյալ միտքը. Ագաթանգեղոսի

Պատմության առաջարանում գրողի աշխատանքի համեմատությունը ծովային հեռադնա ճանապարհորդության և վաճառականության հետ որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ այդ փոխաբերական պատկերի մեջ իր յուրահատուկ արձագանքն է գտել հայ հեթանոսական Տիր աստվածության մասին հնադույն պատկերացումը։

Միջին բարդության երկրորդ կարգի խաղավորումներին նվիրված զեկուցման մեջ արվեստագիտության դոկտոր Ն. Թանմիզյանը նկատեց, որ այդ կարգի խաղավորումների վերծանությունը թույլ է տալիս բավական լրիվ գաղափար կազմելու այնպիսի դժվարիմաց նշանների մասին, ինչպիսիք են «բաղմեղակն» ու «բարձրահարները», որով և նախադրյալներ են ստեղծվում անցնելու միջին բարձրության երրորդ կարգի և բարդ հյուսվածքի խաղավորումների խորացված հետազոտությանը։

Ջուզայի խաչքարերի վրա նկատված մի առեղծվածային պատկերի վերծանման փորձ կատարեց արվեստագիտության թեկնածու է. Կորխմազյանը։ Նրա քննության առարկա պատկերը ներկայացնում է թեավոր մարդու գլուխ ունեցող զույգ առյուծներ, որոնց պոչերն ավարտվում են վիշապների բացված երախներով։ Զեկուցողի կարծիքով այդ խորհրդավոր պատկերը գալիս է հեամենի պատկերացումներից և կապված է Մերձավոր արևելքում ու Հայաստանում մի ժամանակ լայնորեն տարածված Միհրի պաշտամունքի հետ։ Նկարագրվող պատկերը համապատասխանում է Միհրի գլխավոր արբանյակին։ Այն միաժամանակ հիշեցնում է Հովհաննու հայտնության այն գազանին, որի երևալն ազդարարում է Քրիստոսի երկրորդ գալուստը։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Ս. Արևշատյանը։ Նա ասաց, որ զեկուցումները բազմազան էին, ինչպես իր՝ հորելյարի հետաքրքրությունները, բայց դրանց մեջ հիմնականը միջնադարագիտությունն էր։ Նստաշրջանը, նրկատեց Ս. Արևշատյանը, հարգանքի տուրք էր Լ. Խաչիկյանի հիշատակին և հավատաց, որ Մատենագարանն այսուհետև ևս կշարունակի իր արժանահիշատակ տնօրենի ավանդույթները։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ.